բերէին սրբագործութեան միջոց ի սուրբ պատարագին, որով օտարաց հետ ի միասին և բաղմութիւնք ազգայնոց եկեղեցւոյն երրորդ մասին մէջ կը սպասէին, մինչև երկրորդ անգամ դռները բացուելուն։

Ի Թէոդոսիա՝ Ս. Հրեշտակապետք և Ս. Կարապետ. ի Հին Ղրիմ՝ Ս. Խաչ վանքի եկեղեցին բոլորն ալ վերոգրեալ բաժանմունքով շինուած են. միայն այժմ Ս. Սարգիս եկեղեցւոյն այդ բաժանմունքը քանդուած է, և փոխանակ հին դռներուն՝ մեծ կամար մի կը բաժանէ եկեղեցին երրորդ մասէն։ Այդ նորաձևութիւնը դարուս սկիզբները եղած է Ս. Սարգսի մէջ, որ թէպէտ ամէն կողմանէ վայելուչ և ազատ տեսք ունի խորանը, սակայն եկեղեցին իւր վաղեմի ձևը կորուսել է ներքին կողմէն, այս մասամբ։ Նոյն միջոցին մտածած են ազգայինք Ս. Հրեշտակապետաց եւս դռներուն բաժանմունքը մի մեծ կամարի վերածել. այլ բարեբաղդաբար. Ճարտարապետը խորհուրդ չէ տուել, որպէս զի կաթուղիկէն՝ և զայն վեր բռնող կամարները չի խախտին։

Վայելչաձև են յայժ Ս. Սարգսի երեք խորանաց եւս կամարները։ Դիտելու արժանի է և այս, որ ազգային հին եկեղեցեաց ընծայարանները, երկու կողմէն խորանին դուրսն են, և ոչ խաչկային ետևէն. ինձ այսպէս կ'երևի որ խաչկային ետևը ընծայարան չինելը՝ Յունաց հետևողութեամբ մտած է նորաշէն ազգային եկեղեցեաց մէջ։ Խորանին աջակողմեան ընծայարանին անմիջապէս մօտ կը գտնուի որմին մէջ չինուած մկրտութեան աւազանը, ինչպէս որ կը պատուիրէ Ս. Սահակ հայրապետ իր կանոնաց մէջ։ Փոքր վարագուրի սովորութիւնն